



2016 թ., փետրվար: Կարմիր գորգով անցնում էր ֆիլմարտադրության բնագավառի աստղային բոմոնդը: Ամենասպասված իրադարձությունը կինոարվեստում՝ Օսկար: Մրցանակաբաշխություն, որը գագաթնակետն է կինոյի մասին երազող բոլոր մարդկանց համար: Սա այն կետն է, որին հասնելուն պես կարող ես ասել վերջ... հասել եմ: Շքեղ սև լիմուզինը կարմիր լույսի տակ կանգնած, սպասում էր ճանապարհը շարունակելու իր հերթին: Ներսում բոլորն անհամբեր էին, միայն մի հոգի կար անտարբեր: Լուռ նայում էր պատուհանից ու չէր կիսում մյուսների հետ հուզմունքի ու լարվածության միախառնված զգացողությունը: Նա տխուր էր, ասես իրեն չէր վերաբերվում գալիք աժիոտաժը, բայց հենց գլխավոր հավակնորդն իրենց ֆիլմն էր: Մեքենայի ապակուց այն կողմ ոմանք վիճաբանում էին փողոցում, ոմանք թափառականի կյանքով էին ապրում, ոմանք ինչ-որ տեղ էին շտապում: Նա պատուհանից տեսնում էր անարգել ընթացող մարդկային կյանքի ռիթմը, այն ոչ մի վայրկյան կանգ չէր առնում, բայց կանգ էր առել ինքը՝ Էդոն, որ մտածի: «Ընդհանրապես բոլորին է մտածել պետք, բայց դա հաճախ չենք անում»։ Ինքն իր հետ անձայն խոսում էր: Մեկ էլ հանկարծ կողքին նստած Անուշը ականջին շշնջաց. «Հասնում ենք արդեն, մի՛ հեռացիր մեզանից, թե չէ քեզ հետ բերելը էլի իմ վրա է մնալու, գոնե այս ուրախ օրով ինձ խղճա»: Զարթուցիչի՝ իր համար արդեն սովորական դարձած ֆունկցիան այս անգամ էլ կատարած համարելով՝ Անուշը շարունակեց իր զրույցը մեքենայում գտնվող մյուս անձանցից մեկի հետ,

ով ֆիլմի գլխավոր դերակատարն էր՝ Թելմանը: Հասան, դուրս եկան մեքենայից: Էդոն էլի տեղում չէր, չէր նկատում շուրջը կատարվող իրադարձությունները: Մտքերով իր ֆիլմում էր. դուրս չէր եկել նկարահանման հրապարակից, շարունակում էր հրահանգներ տալ: Ներս մտան թատրոնի շենք, աղմուկ էր, լարված, միևնույն ժամանակ շատ տոնական մթնոլորտ: Բոլորը բոլորին շնորհավորում էին, խառը անցուդարձ էր: Քանի չէր սկսվել արարողությունը, Էդոն զգաց, որ իրոք կարիք ունի ցրվածությունը հանելու, գնաց վրացվելու... միգուցե այդպես կարողանար տրամադրել իրեն անցուդարձին մասնակիցը լինելուն: Այդպես էլ վարվեց, դեպի դահլիճ ետ գալու ճանապարհին էր, մեկ էլ հանկարծ Էդոյի ականջին լսվեց մի ձայն, օրօրոցայինի հնչյուններ՝ Օօօօրիիիիիմ օրիիիիիմ, օօօօօօօօ՝րիիիիիիմմմմ.....

Արմինեն էր երգում: Էդոն դանդաղ շրջվեց պարզելու համար, թե որտեղից են այդ ձայները: Արմինեն նույնպես շրջվեց: Արցունքներն աչքերին նայեց որդուն: Այսքան տարիների ընդմիջումից հետո նա իր առջև էր: Բարի, թախծոտ աչքերով մի երիտասարդ: Նա այդ պահին այնքան հարազատ էր թվում Արմինեին, որ մի պահ մայրական սիրտը մոռացնել էր տվել իր ամենամեծ վախի մասին, թե ինչ կլինի, երբ իմանա ճշմարտությունը: Սակայն այդ պահը երկար չտևեց: Թելմանը գտավ Էդոյին ու շտապեցնելով տարավ դեպի դահլիճ: Էդոն նստած էր իր ընկերների կողքին՝ արարողության ընթացքում մտքում այդ ձայնից ուշքի չգալով: Չէր էլ փորձում գոնե մեկ-մեկ կենտրոնանալ բեմում ընթացող գործողությունների վրա: Որոշ ժամանակ անց կարողացավ ցրել մտքերն այդ դիպվածից, բայց հիմա էլ ընկավ մեկ ուրիշ աշխարհ: Ընդհանրապես ինքը միշտ ուրիշ տեղ էր, միշտ այլ մոլորակում էր: Նրա արտահայտած մեկնաբանությունները այս կամ այն հարցի շուրջ միշտ արտառոց են եղել և մտածելու տեղիք տվող, որովհետև նա էլ իր տեսակով մտածող էր, անվերջ մտածող...

Վերջապես մոտենում էր երկար սպասված վայրկյանը՝ տարվա լավագույն ֆիլմ նոմինացիայում հաղթող կինոնկարի անունն

արտասանելու պահը: Մեկ էլ հնչեց իրենց ֆիլմի անունը: Ծափահարությունները թնդացին: Էկրանին հայտնվեց Էդոյի մտամուլոր դեմքը: Նրանում ամենևին չէր նկատվում ժամի ու վայրի կարևորության գիտակցումը: Նրա աշխարհը ուրիշ էր, խորն էր: Ամեն մի ձայն, հնչյուն ու կադր այդ աշխարհում մի պատմություն պիտի պատմեին, այլապես դա Էդոյի աշխարհը չէր լինի: Նա չէր եկել մյուսների նման հուզվելու, արտասվելու, ծնողների առաջ խոնարհվելու, գործընկերներին շնորհակալություն հայտնելու: Ոչ, այդ ստանդարտ տեքստերը նրա համար չէին: Նա միշտ ստանդարտից դուրս էր, և դրանում էր նրա տաղանդի ուժը: Այդ փոքրամարմին երիտասարդը ստանդարտ սահմանող էր, ոչ թե ստանդարտներին հետևող:

Նա հանդարտ բարձրանում էր աստիճաններով դեպի բեմ, ու ոչ մի հուզմունք, ոչ մի խառնվածություն, ինչպես միշտ: Մինչ այդ միայն մտերիմների շրջանում հայտնի ցրվածությունը դատապարտված էր ակնթարթորեն անհետանալուն, երբ գալիս էր պատասխանատու պահը, և արտահայտման համապատասխան միջոցը հայտնվում էր իր դիմաց: Տվյալ պարագայում դա միկրոֆոնն էր:

Նայեց մի պահ այդ արիստոկրատ դահլիճի լույսերին, նայեց ներքև, նկատեց ներկաներին, որոնք անհամբերությամբ սպասում էին նրա խոսքին... նա սպասեցնում էր: Վերջապես սկսեց խոսել դանդաղ, հանդարտ, բայց ոչ այն բառերը, որոնց սովոր էին բոլորը, որոնք տասնամյակներ շարունակ հնչել էին այդ ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ.

– Աշխարհը վազում է: Հա՛, հա՛... ես տեսա այստեղ գալիս՝ ճանապարհին: Աշխարհը վազում է, բայց ո՞ր է վազում, ինքը գիտի՞, թե այդ ուր է այդպես շտապում... չգիտի: Կինոարտադրողներ, ինչո՞ւ են պետք ձեզ սցենարներ, երբ մարդն է սցենարների սցենարը: Ֆանտաստիկա՞ եք փնտրում, ամենամեծ ֆանտաստիկան մարդկային հոգին է: Սարսափ ֆիլմ եք նկարահանում, ամենամեծ սարսափը մարդ արարածն է աշխարհիս վրա: Կատակերգությունն է լավ իրացվում, կատակերգությունը մեր կյանքն է ինքնին: Ողբերգությունն էք նկարահանում, ողբերգությունը մարդու՝

կարծրացող, և միևնույն ժամանակ հեշտությամբ մանիպուլացման ենթարկվող ուղեղն է, որ պրիմիտիվացել է մեր ժամանակներում, իսկ մենք՝ կինոարտադրողներս, այն շարժելու փոխարեն, ավելի ենք քարացնում մի կետում: Պարզեցնում եք... պարզեցնում եք, ընկերներ: Պարզունակ ժամանցի եք վերածում ժամանակի այդքան թանկ սլաքների ընթացքը, որ դրանք շարժվեն ու շարժվեն, և մեծ փողեր բերեն ֆիլմինդուստրիային: Իսկ տակը ի՞նչ է մնում... մակերես, առանց խորության: Իսկ խորություն մարդկությանը պետք է, որ մարդիկ քայլ անելուց առաջ մտածեն, իսկ միգուցե ցավեցնո՞ւմ են դիմացինին: Առանձին վերցրած Մարդը ճշմարտություն սիրում է, բայց մարդկությունը՝ ոչ: Մարդկությունը լռություն է սիրում: Այն անպաշտպան է, որովհետև քնած է. չնայած թվում է, թե արթուն է, քան երբևէ:

Հաղորդավարները տարակուսանքի մեջ էին, կազմակերպիչները ևս, սովոր չէին նման երկար ու արտասովոր ելույթների: Մտածում էին ընդհատել, թե ոչ, բայց ընդհատել ինչպե՞ս. մթնոլորտն ուրիշ էր, հանդիսատեսն էլ կլանված ու ոչ պակաս զարմացած լսում էր:

– Էս ի՞նչ ա հետը կատարվում, էս նորմա՞լ ա,– նայելով Անուշին հարցրեց Թելմանը:

– Իբր նո՞ր ես ճանաչում նրան: Դու քեզ նայիր... նրա աչքին աննորմալը մենք ենք,– քամահրանքով պատասխանեց Անուշը:

Էդոն սահուն շարունակում էր՝ չնկատելով աջ կողմում կանգնած հաղորդավարների անհանգիստ շարժումները.

– Այս ֆիլմը իմ ազգի պատմության դաժան դրվագներից հետո յուրաքանչյուր հայի սրտում դաջված խորը սպիի մասին է: Այն չի նկատվում, անտեսանելի է, պետք է զգալ, իսկ դրա համար պետք է ներսում լինել, հայի հոգու ներսում: Այլապես չես հասկանա, թե նա ինչ է զգում, երբ Արևմտյան Հայաստանում՝ ներկայիս Թուրքիայում, ճամփորդելիս, նախնիների հողի վրա քայլելու ընթացքում տեսնում է, թե ինչպես մի աղջնակ տուն մտնելուց առաջ ոտքերը մաքրում է մի շորի կտորի վրա, որի տակ հայկական հինավուրց խաչքար է: Իմ

հերոսը գիտակցում է, որ այդ աղջիկը մեղավոր չէ: Նրան ատելու փոխարեն արցունքներն աչքերին մոտենում է և ճանապարհին քաղած ծաղիկ նվիրում: Բայց իմ հերոսի հոգու արցունքները մաքրող այդպես էլ չի գտնվում: Այն կարող էր մաքրել խոսքը, խոստովանությունը, որ 100 տարուց ավել է չի ասվում: Խոսք՝ հզորագույն մի զենք, որ զինվորական պառադներով չի անցնում: Դրանով իրար պայթեցնելու համար փորձարկումներ չեն անում, բայց խոցում է ավելի դիպուկ, ոչ մի պաշտպանություն չի դիմանում, որովհետև խոցում է հոգին, այլ ոչ թե մարմինը: Խոսքով կարող ես սպանել կամ նորից կենդանացնել: Երբ Թուրքիան մեզնից ներողություն խնդրելու փոխարեն նորից հոխորտում է, գիտե՞ք՝ դա ինչ զգացողություն է: Հասկանում եք՝ դա հենց բուն ցեղասպանությունից էլ վատ է: Նրանք չեն պատժվել, մարսել են և սա է արդյունքը: Չկա երաշխիք, որ նորից չի կրկնվի մեզ հետ նույնը: Ոչ ոք այդ երաշխիքը չի կարող տալ... Ափսոս են ծառերը... ափսոս են ծառերը, որ աննպատակ թուղթ պիտի դառնան: Դրանց վրա տոննաներով սիրուն, պսպղուն մտքեր պիտի շարադրվեն մարդու իրավունքների մասին... հանդիսավորությամբ, ծափերի ներքո կնքվեն ու ստորագրվեն: Իսկ երբ գործը հասնում է մեզ ու էլի շատ ուրիշ անօգնական ժողովուրդներին... դրանք չկան, դրանք չեն աշխատում, դրանք ձև են... Գիտե՞ք՝ ինչու չեն աշխատում, որովհետև այս մոլորակում միայն մի բան է լավ աշխատում՝ շահը... ափսոս են ծառերը...

Երգում էր, իսկ մտքերով Անիի եկեղեցիների պատերի ներսում էր քայլում: Աչքերի առաջ այդ ավերված, բայց վեհաշուք քաղաքն էր, որ թեկուզ կիսաքանդ, բայց հուշում էր իր ոգեղեն ուժի մասին, որ Հայից լավ ոչ մեկ չէր զգա, քանի որ այդ ուժը Հայից էր ստացել, Հայն էր կառուցել ու հենց Հայի համար է պահված: Ֆիլմի նկարահանման ժամանակ Արևմտյան Հայաստանում անցկացրած ամբողջ ժամանակը մի քանի թույլների ընթացքում անցավ դիմացով: Երգելուն զուգահեռ աչքերից դանդաղ արտասուք էր թափվում, ասես

ուզում էր մարդկության փոխարել լաց լինել: Քանի որ մարդկությունը սովոր չի լացել անգամ այն պարագայում, երբ նրանում տառապանքը շատ է ու ամենուր: Երջանկությունը նունիսկ չի կարողանում մրցակցել տառապանքի հետ, քանի որ այն քիչ է... քանի որ՝ քչինն է: Այո, նույնիսկով եմ խոսում, որովհետև մեր օրերում, երբ կյանքը դարձել է հազար անգամ ավելի բարեկեցիկ համեմատ անցյալ դարի, չարիքը չի վերացել, իսկ մարդիկ շատ փխրուն են: Մարտահրավերներին դիմակայում են, բայց բարձր գին են վճարում, որովհետև չեն սովորել մեկը մյուսի ցավը սեփականը համարել: